

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ես՝ Տիրան Նվերի Խաչատրյանս, 2022 թվականի հունվարի 5-ից մինչև նույն թվականի մայիսի 23-ը իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

- Մշակել և Mulberry փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգով ելքագրել եմ 61 գրություն՝ նախատեսված ներքին կամ արտաքին շրջանառության նպատակով:

- Իրականացրել եմ վերահսկողական ոլորտն ընդգրկող սուբյեկտների՝ հարկադիր կատարողների, քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների գործունեության օրինականության ստուգումներ:

- Վերահսկողական գործառույթների իրականացման ժամանակ ի հայտ եկած վարչական վարույթ հարուցելու առիթներով սկսել և իրականացրել եմ վարչական վարույթներ:

- Իրականացրել եմ ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված օրենքի խախտմամբ գործող հարկադիր կատարողների, քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների՝ այդպիսի գործելաոճի շարժառիթների և դրդապատճառների բացահայտում և կանխարգելում:

- Իրականացրել եմ Նոտարական պալատի կողմից օրենքների և իրավական այլ ակտերի և պալատի կանոնադրական պահանջների պահպանման նկատմամբ ուսումնասիրություն:

- Իրականացրել եմ արդարադատության նախարարության վերահսկողական վարչության կողմից վերահսկվող ոլորտներին առնչվող դիմումների, բողոքների, հաղորդումների քննության, ինչպես նաև համապատասխան հանձնարարականի հիման վրա ուսումնասիրություններ և անհրաժեշտ այլ աշխատանքներ:

- Իրականացրել եմ արդարադատության նախարարության վերահսկողական վարչության գործառույթներին առնչվող այլ աշխատանքներ:

- Իրականացրել եմ ՀՀ արդարադատության նախարարի առանձին հանձնարարականների գործառույթներ:

Տիրան Խաչատրյան
23.05.2022թ.

